ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 70-Ն

09 նոյեմբերի 2012 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի N -67-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29 և 33 հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի 2012 թվականի բյուջեի հաստատման մասին» N 67-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները

1. 09.5.1.51 գործառական դասակարգման (արվեստի դպրոցի պահպանման ծախսեր) 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածից պակասեցնել 90000 (իննսուն հազար) դրամ, 4131 (պարտադիր սոց. վճարներ) հոդվածից՝ 40000 (քառասուն հազար) դրամ,4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածից՝ 80000 (ութսուն հազար) դրամ:
2. 09.5.1.51 գործառական դասակարգման (երաժշտական դպրոցի պահպանման ծախսեր) 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածից պակասեցնել 420000 (չորս հարյուր քսան հազար) դրամ, 4131 (պարտադիր սոց. վճարներ) հոդվածից՝ 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) դրամ:
   4269(հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածին ավելացնել 50 000 (հիսուն հազար) դրամ:
3. 09.5.1.51 գործառական դասակարգման (մարզադպրոցի պահպանման ծախսեր) 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածից պակասեցնել 70000 (յոթանասուն հազար) դրամ:
4. 08.2.3.51 գործառական դասակարգման (մշակութային երիտասարդական կենտրոնի պահպանման ծախսեր) 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածից պակասեցնել 192 000 (մեկ հարյուր իննսուներկու հազար) դրամ, 4131 (պարտադիր սոց. վճարներ) հոդվածից՝ 48 000 (քառասունութ հազար) դրամ, 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածից՝ 200000 (երկու հարյուր հազար) դրամ: 4269(հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածին ավելացնել 20 000 (քսան

հազար) դրամ, 4212(էներգետիկ ծառայություններ) հոդվածին՝ 30 000 (երեսուն հազար) դրամ:

5. 05.1.1.51 գործառական դասակարգման (աղբահանում) 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածից պակասեցնել 130000 (մեկ հարյուր երեսուն հազար) դրամ, 4269(հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածին ավելացնել 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ:
6. 11.1.2.51 գործառական դասակարգման (պահուստային ֆոնդ) 4891 (պահուստային միջոցներ) հոդվածին ավելացնել 1220000 (մեկ միլիոն երկու հարյուր քսան հազար) դրամ:
7. «Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ» 1392 տողն ավելացնել 995000 (ինը հարյուր իննսունհինգ հազար) դրամով:
   «Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ» 1392 տողից 995000 (ինը հարյուր իննսունհինգ հազար) դրամ հատկացնել 01.1.1.51 գործառական դասակարգման(ապարատի պահպանման ծախսեր) 5112(շենքերի և շինությունների կառուցում) հոդվածին:

1) 468000(չորս հարյուր վաթսունութ հազար) դրամ որպես նվիրատվություն հատկացնել 09.2.1.51 գործառական դասակարգման (հիմնական ընդհանուր կրթություն) 4819 (նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին):

2) 626700(վեց հարյուր քսանվեց հազար յոթ հարյուր) դրամ հատկացնել 06.4.1.51 գործառական դասակարգման (փողոցների լուսավորում) 4251(շենքերի և շինությունների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածին:

ՄԱՐԱԼԻԿՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

09 նոյեմբերի 2012 թվական

ք. Մարալիկ